

491.55

4.19

Գ. Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Պարսիկ
Երկրի

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

245
0.19
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. Մ. ՆԱԼԲԱՆԴԻԱՆ

ՊԱՐՍԻՑ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(ՀԵՉՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ԶԵՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ)

Քույլատրված է ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության միջխառնության կողմից որպես ուսումնական ձեռնարկ Սրեանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի ուսանողների համար

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1980

Խմբագիր՝ դոց. Ա. Ա. Զ. Պապոյան
Գրախոս՝ պրոֆ. Զ. Գ. Փափազյան

ՆԱԼԻՔԱՆԻՅԱՆ Գ. Մ.

Ն101 Պարսից լեզվի քերականություն: (Հնչյունաբանություն, բա-
ռագիտություն, ձևաբանություն): Ուս. ձեռնարկ համալս.
արևելագիտ. ֆակ. համար:—Սր.:—Սրևանի համալս. հրատ.,
1980.—452 էջ.

Ձեռնարկի առաջին հատորը ընդգրկում է ժամանակակից պարսից
լեզվի կազմավորման համառոտ պատմությունը, զարգացման շր-
ջանները, հնչյունաբանությունը, բառագիտությունը: Նկարագրված
են քերականական համապատասխան կարգերը, խոսքի մասերին
ընդողջ բառափոխության ու բառակազմության յուրահատկույուն-
ները: Քերականությունը շարադրված է համաժամանակյա (սինխրո-
նիկ) հայեցակետով՝ պարսից դասական և ժամանակակից գեղար-
վեստական գրականության լեզվական տվյալների հիման վրա:

Նախատեսվում է ուսանողների, ասպիրանտների, ընդհանրապես
պարսկերենի ուսումնասիրությամբ զբաղվողների համար:

4602000000

19-79

411 (Պարս)

704(03)-79

81.2 (պարս)—2Ղ73

2502565258

Налбандян
Георгий Мкртычевич

ГРАММАТИКА ПЕРСИДСКОГО ЯЗЫКА


(Фонетика, лексикология, морфология)

(На армянском языке)

Издательство Ереванского университета

Ереван—1980

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980



Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Բ

Հայոց մեջ Օտար լեզուների ուսումնասիրութիւնը ունի բազմահարուստ ավանդույթներ: Հնուց ի վեր հրապարակվել են զանազան լեզուների՝ բազմաոսասկ մեծ ու փոքր քերականութիւններ:

Արեւելյան լեզուներից հայերը ուշադրութիւն են դարձրել թուրքերենի, արաբերենի և պարսկերենի վրա:

Թուրքերենի ու արաբերենի վերաբերյալ ունենք մի շարք արժեքավոր բառարաններ, այլև բազմաթիվ դասագրքեր ու քերականութեան ձեռնարկներ: Չնայած պարսկերեն լեզվի ուսուցման կարևորութեանն ու անհրաժեշտութեանը՝ ինչպես պարսկահայ գաղութում ընդհանրապես, այնպես էլ հայագիտութեան համար մասնավորապես, այնուամենայնիվ, թերևս զարմանալի թվա, սակայն փաստ է, որ բազում դարերի ընթացքում պարսկերենի համար կազմվել և հրապարակի վրա է միայն Գևորգ Դպիր Պալատցու պարսկերեն-հայերեն բառարանի սկզբում զետեղված Հակոբ Տյուզլյանի, չամառ Օտ քերականութիւն պարսկական բարբառոյ, մի հին աշխատութիւն |1826 թ. |:

Պարսկերեն լեզվի ուսումնասիրութիւնն ունի որոշ ավանդույթներ համաշխարհային և հայրենական գիտութեան մեջ:

Պարսկալեզու գեղարվեստական խոսքի և գիտական մտքի գանձերը ուսումնասիրվում են ոչ միայն Սովետական Միութեան կենտրոնական համալսարաններում և գիտութիւնների ակադեմիայի համապատասխան ինստիտուտներում, այլև մանկավարժական ինստիտուտներում ու գիտահետազոտական այլևայլ հիմնարկներում:

Հատկապես մեր հանրապետութիւնում անընդհատ ընդլայնվում է այս բնագավառով զբաղվող կամ հետաքրքրվող գիտական հասարակայնութեան շրջանակը: Մինչև դեռ մինչև այժմ հրապարակի վրա չկա մայրենի լեզվով պարսկերենի քերականութեան մասին որևէ աշխատութիւն, որը գոնե ընդհանուր գծերով նկարագրած լինէր պարսից լեզվի կառուցվածքը, նրա առանձնահատկութիւններն ու քերականական ընդհանուր համակարգը:

Երևանի պետական համալսարանում ունեցած երկա-
րայա պաշտոնավարութեան ընթացքում անկամբ զգա-
ցել ենք, թե ուսանողութիւնը որքան դժվարութիւն
ներ է կրում մայրենի լեզվով պարսկերենի փերակա-
նութեան ձեռնարկ չունենալու պատճառով:

Նշված բացը լրացնելու, պարսկերեն լեզվի ուսու-
ցումը դյուրացնելու նպատակով, ահա, մենք կատարե-
ցինք՝ ինչ որ մեր համեստ կարողութիւնը ներքե
մեզ անելու:

Ընթերցողին ներկայացվող սույն աշխատութիւնը
ստեղծվել է համանուն դասընթացի՝ տղերիս հեղի-
նակի դասախոսութիւնների հիման վրա, որոնք կար-
դացվել, լրացվել ու մշակվել են տարիների ընթաց-
քում՝ մեր իրանագիտական կենտրոններից մեկի՝ Երե-
վանի պետական համալսարանի արևելագիտութեան ֆա-
կուլտետի իրանական բանասիրութեան բաժնում:

Պարսից լեզվի փերակալութեան, ներկա ա-
ռջին հատորը ընդգրկում է ընդարձակ ներածութիւն,
ժամանակակից պարսկերենի հնչյունաբանութիւնը,
բառագիտութիւնը և ձևաբանութիւնը:

Ներածութեան մեջ համառոտակի շարադրված է պար-
սից լեզվի կազմավորման պատմութիւնը, բնութագրը-
վում են նրա զարգացման շրջանները, ցույց է տրը-
վում պարսկերեն լեզվի տեղը իրանական լեզուների
համակարգում, ինչպես նաև հնդեվրոպական լեզուների
ընտանիքում:

Հնչյունաբանութեան բաժնում մանրամասն վեր են
լուծված պարսկերենի գրութիւնը, հնչյունաբանու-
թիւնը, շեշտադրութիւնը:

Բառագիտութեան բաժնում տրված է բարձր յամակող-
մանի քննութիւնը, նրա բաղադրիչների իմաստաբանական
հարաբերութիւնների վերլուծութիւնը: Ըստ ամե-

նայնի ցույց են տրված պարսկերեն լեզվի բառային
կազմի համալրման ուղիները, ժամանակակից պարսկե-
րենի դարձվածաբանութեան առանձնահատկութիւնները:
Այստեղ մանրամասնութեամբ ուսումնասիրված են պարս-
կերեն լեզվի բառապաշարի հիմնական շերտերը, տրված
է պարսից լեզվի հիմնական բառակազմի բնութագիրը:

Ձևաբանութեան բաժնում տրված է լեզվի ձևաբանա-
կան վերլուծութիւնը ըստ խոսքի մասերի: Մանրա-
մասն նկարագրված են ժամանակակից պարսկերենի փե-
րականական կարգերը, զանազան խոսքի մասերին բը-

նորոշ բառափոխութեան ու բառակազմութեան համակարգերը:

Բերականոթյունը կազմված է համաժամանակյա/սինխրոնիկ/ հայեցակետով՝ պարսից դասական և ժամանակակից գեղարվեստական գրականութեան լեզվական տվյալների հիման վրա:

Աշխատութեան վերաբերյալ տեսական ուսումնասիրութիւններին ու գրական աղբյուրներինց բացի, հեղինակը լայնորեն Օգտագործել է նաև պարբերական մամուլը, բառարաններ, ուսումնական ձեռնարկներ, իր անձնական գրառումներն ու դիտողութիւնները: Հանիր որ աշխատութեան մեջ բերված բնագրային վկայութիւնները հասնում են հազարների, հեղինակը հնարավոր է համարել չնշել աղբյուրը:

Այդ երկերը նշվում են համառոտ մատենագրութեան մեջ:

Ինչպես արդեն ասվեց, գիրքը ստեղծվել է դասընթացի դասախոսութիւններինց և կարող է, այդպիսով, ծառայել որպես ձեռնարկ՝ պարսկերենը ուսումնասիրողների համար: Սակայն այն ուսումնական ձեռնարկ է՝ բառիս նեղ իմաստով և նախատեսված է միայն ուսանողութեան համար:

Աշխատութիւնը ընդարձակութեամբ և բովանդակութեամբ իր տեսակի մեջ առաջինն է: հայ ընթերցողի համար հալասարապես նոր կամ նորաստեղծ է:

Հեղինակը խորապես գիտակցում է, որ պարսկերեն լեզվի հետ կապված բոլոր հարցերը չեն, որ աշխատութեան մեջ լուսաբանվում են նույն մակարդակով ու խորութեամբ: Այդ հանգամանքը մասամբ բացատրվում է նրանով, որ դեռևս առանձին հարցեր կամ ընդհանրապես մշակված չեն, կամ էլ պատշաճ մշակման չեն ենթարկված: Մասամբ կարող են լինել և հեղինակի թերացումներ: Ուստի և քրախոսագիտութեամբ կրնդունվի բարեկամական ամեն մի քննադատութիւն:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

Մ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պարսկերենը իրանի պետական լեզուն է: Բացի իրանից, պարսկերեն խոսվում է նաև Տաջիկական ՍՍՀ-ում, Ուզբեկական ՍՍՀ-ի որոշ քաղաքներում (Սամարղանդ, Բուխարա), Հնդկաստանում, Աֆղանստանում, Պակիստանում:

Պարսկերենը պատկանում է իրանական լեզուների արևմտյան խմբին, մյուս բոլոր իրանական և հնդկական լեզուների հետ միասին կազմելով հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական կամ արիական ճյուղը:

Հինեղով աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ այն ունի գրավոր հարուստ ավանդույթներ:

Պարսից լեզվի պատմության մեջ տարբերվում է զարգացման երեք շրջան՝ հին, միջին և նոր:

Հին շրջանը ընդգրկում է 6-4-րդ դդ. մ.թ. առ հայտնի է մեզ հին պարսկերեն անունով:

Հին պարսկերենը, որ նախպես ցեղային լեզու էր (փարսուա ցեղի), զարգանալով բարձրանում և հասնում է ժողովրդի լեզվի աստիճանին և դառնում նոր կազմավորված պարսկական էթնոսի ընդհանուր համաժողովրդական լեզուն:

Պարսկական մյուս ցեղերի լեզուները կամ ձուլվեցին նրա հետ, կամ էլ մնացին որպես տարածքային բարբառներ:

Հին պարսկերենը մեզ ավանդված է սեպագիր արևանագրություններով, որ թողել են Աթեմնյան Բազավորներ կյուրոսը, Դարեհը, Բեհրթեսը, Արտաքսերքսեսը և ուրիշներ: Պարսկաստանի հին մայրաքաղաքներում՝ Պերսեպոլիսում (Թաթբե Ջամշիդ), Սուզայում (Շուշ), Եֆթաթում (Համադան):

Ավելի մեծ ու ընդարձակ արևանագրությունները գտնվում են ժայռերի վրա՝ Բիսթունյան, Ալվանդի, Նաղշ-ե Ռոստամի դամբարան-ժայռում, Խորխոռի ժայռի վրա՝ վանում:

Մի շարք այլ արձանագրութիւններ էլ, որոնք
ավելի համառոտ են, փորագրված են պալատների պա-
տերին, սյուների վրա, կան և ավելի անշշանները՝
զանազան մետաղե ու կավե ամանների, փոքրիկ բուր-
գերի, ճաղկամանների և այլ իրերի վրա:

Հին պարսկական սեպագիր արձանագրութիւններն
ուրեւն պատմական մեծ արժեք: Նախ՝ մենք իրանի հը-
նագույն պատմութեան մասին տեղեկութիւն ենք ստա-
նում բուն աղբյուրից: այդ արձանագրութիւնները
փորագրված լինելով ժայռերի վրա, ո՛չ մի նորամու-
ծութեան չեն ենթարկվել և մեզ հասել են անաղարտ
ձևով, հարազատորեն պահելով իրանի հարավ-արեւմտյան
հնամենի լեզուն:

Հին պարսկերենը լինելով հնդեվրոպական հնագույն
լեզուներից մեկը, մեծ չափով նպաստում է այդ լեզու-
ների համեմատական քերականութեան ուսումնասիրու-
թյանը: Հին պարսկերենի քննութիւնը հնարավորու-
թիւն է տալիս ըմբռնելու նրա հետագա զարգացման
փուլերը, այդ թվում նաև ժամանակակից լեզվի համա-
կարգը, բացահայտելու նրա կառուցվածքն ու Օրինա-
չափութիւնները:

Ժամանակակից պարսկերենում կան այնպիսի երևույթ-
ներ, որոնք, իբրև հնագույն Օրինաչափութիւնների
մնացորդներ, բացատրվում են պարսից լեզվի հին վի-
ճակի տվյալներով:

Հին պարսկերենը իր ձևաբանական համակարգով թե-
քական տիպի լեզու է: Ի տարբերութիւն ժամանակա-
կից իրանական լեզուների, այդ թվում արդի պարսկե-
րենի, այդ լեզվում քերականական կարգերն արտահայտ-
վում են ներքին թեքումով ու մասնիկաւորումով:

Այստեղ մասնիկներն Օրգանապես միացած են արմա-
տին, և հաճախ նույն մասնիկը արտահայտում է մի քա-
նի քերականական իմաստներ թիվ, սեռ, հոլով և
այլն/:

Քերականական իմաստները հին պարսկերենում ար-
տահայտվում են նաև արմատի հնչյունափոխութեամբ:

Հին պարսկերենի հոլովման համակարգը դեռ որոշ
չափով պահպանում էր հնդեվրոպական նախնական բը-

նույժը, այսինքն՝ հիմնականում թեքական տիպի էր, և ըստ հոլովվող բառի սեռի /իգական, արական, շե-գոթ/, ինչպես նաև թվի /եզակի, երկակի, հոգնակի/՝ հոլովումը կատարվում էր վերջավորությունների փոփոխությամբ:

Ուներ ութ հոլով:

Հին պարսկերենում որոշ շափով պահպանվել են հնդեվրոպական հիմք լեզվի դերանունների առանձնահատկությունները: Այսպես, Օրինակ՝ հին պարսկերենը ևս անձնական դերանվան Տ-րդ դ-ի համար գործածում է ցուցականը: Հնդեվրոպական լեզվում հեռու առարկան նշանակող ցուցականներն են գլխավորապես ա, ո, և -ն /ձայնավորները՝ անորոշ/: Այդ հնդեվրոպական v -ն գտնվում է հին պարսկերենի ava, hauv ցուցականների մեջ, որը նույնպես ցույց է տալիս հեռու առարկաներ: Օրինակ՝

hya imam bumim odd, hya avam asmanam odd.

,,զրը ստեղծեց այս երկիրը, որը ստեղծեց այն երկիրներ,,:

ինչպես հնդեվրոպական հիմք լեզվում, այնպես էլ հին պարսկերենում, դերանունները գոյականի նման բոլոր թվերի մեջ միևնույն հիմքը չեն պահում: այլ կերպ ասած՝ եզակին և հոգնակին տարահիմք են / soup letive /, մեկը մի հիմքից է կազմվում, մյուսը՝ այլ: Օրինակ՝ հնդեվրոպական *egō և *mes, հին պարսկերեն adam ,,ես,, և amāxam ,,մենք,,: ինչպես նաև հոլովման ժամանակ՝ անձնական դերանվան առաջին դեմքը ուղղականում ունի մի հիմք, մյուս հոլովները՝ տարբեր հիմքեր, որոնք միշտ m ռեզայինով են /հմատ. ուղղ. adam, հայց. mām, սեռ. տր. manō, maiy/:

Հին պարսկերենը ունեցել է բայերի խոնարհման բարդ համակարգ: Այստեղ մի բայը կարող էր ունենալ բազմաթիվ ինքնուրույն հիմքեր: ըստ որում, եթե տրված լինի որևէ մեկ ևնը, հնարավոր է է որոշել մյուս ևները: խոնարհումը կրում է գերազանցապես թեքական բնույթ: Բայերն ունեն երկու կանոնավոր ժամանակներ՝ ներկա և անցյալ անկատար: Միևնույն հիմքը կարող է կազմել ներկան և անցյալը /տորիս-

տը /, Օրինակ՝ ներկա- bara(n)tiy , նրանք բերում
 են , /հմտ. սանսկր. bharanti , հայ. -բերել, անց-
 յալ՝ abara , նա բերեց , /հմտ. սանսկր. abharat,
 հայ. -բ-բեր /:

Ապառնի ժամանակի ու մի հետք չի պահպանվել, սա-
 կայն ստորադասական եղանակի բայերը գործածվում էին
 նաև ապառնի ժամանակի իմաստով: Հին պարսկերենի բա-
 յերի եղանակները չորսն են. սահմանական, ստորադա-
 սական, ըղձական և հրամայական:

Բայական հիմքերի ուսումնասիրությունները ցույց
 են տալիս, որ հին պարսկերենն ունի հնդեվրոպական
 հիմք լեզվի վերջավորությունների բոլոր տեսակնե-
 րը, ըստ որում՝ սահմանական ներկայում և ստորադա-
 սականում՝ առաջնային վերջավորություններ, Օրինակ՝
 եզակի 1-ին դեմք -mīy , անցյալում և ըղձականում՝
 երկրորդային վերջավորություններ. Օրինակ՝ եզակի
 1-ին դեմք - m : Հատուկ վերջավորություններ ունի
 հրամայականը: Այստեղ ամբողջությամբ պահպանված է
 նաև ներգործական և լեզոք սեռի բայերի վերջավորու-
 թյունների տարբերակումը: Հրամայական եզակի ներկա
 2-րդ դեմք -diy , հրամայական եզակի լեզոք 2-րդ
 դեմք -xuvā:

Պետք է նշել, որ միայն Դարեհի և Զսերքեսսի կող-
 մից թողած արձանագրություններում է, որ հին պարս-
 կերենը ներկայացվում է որպես իր թեթևանությունը
 դեռևս անաղարտ պահպանած լեզու: Բայց դա արդեն
 հին շրջանի վերջն է: Ավելի ուշ շրջանի արձանագր-
 ությունները /Արտաքսերքեսս 1-ինի, Արտաքսերքեսս
 2-րդի/ արդեն վկայում են, որ թեթևանությունը ըս-
 կըսել է քայքայվել, վերջավորությունները հետզհետե
 վերանում էին, թեթևումը պարզվում էր: Իսկ Արտա-
 քսերքեսս 3-րդի արձանագրությունների լեզվից երե-
 վում է, որ այդ ժամանակ /4-րդ դար մ.թ.ա./ հին
 պարսկերեն լեզուն արդեն կորցրել էր իր հարուստ թե-
 թևանությունը և ստացել էր նոր որակ: Այդ շրջանի
 արձանագրությունները ցույց են տալիս, որ քերական-
 նական սեռը իր անկման շրջանն է ապրում, այսինքն՝

հին հնդեվրոպական սեռային տարբերությունները
 միայն մասնակիորեն են արտահայտվում: Ծուցական դե-
 րանունները և ածականները պահպանել են որոշ սեռա-
 յին տարբերություններ, իսկ գոյականների սեռը ու-

ըռշվում է միայն այդ խոսքի մասերի հետ կապակց -
վելու միջոցով: Նույն անկման վիճակն է ապրում
նաև երկակի թիվը:

Ինչպես արդեն նշվեց, հոլովումը հին պարսկե-
րենում իրացվում է վերջավորութայունների փոփոխու-
թյամբ: սակայն այստեղ ևս նկատվում է այդ համա-
կարգի աստիճանական քայքայում, տարբեր հոլովների
վերջավորութայունները նույնանում են և պահանջ են
առաջադրում հոլովական իմաստներ արտահայտելու նոր
միջոցի: Այստեղ արդեն հոլովական վերջավորութայն
հետ միասին՝ հանդես են գալիս նաև նախդիրներն ու
ետադրութայունները: Այսպիսով, հոլովումը գնում է
դեպի պարզեցում: Տրական հոլովը այլևս առանձին
գոյութայուն չունի: հին սեռականի մեր ստանձնել է
տրական հոլովի բոլոր գործառութայունները:

Ներգոյական հոլովը սովորաբար ստանում է 2 ե-
տադրութայունը /բացառությամբ հատուկ անունների/,
Բացառական հոլովին հաճախ նախորդում է hača նախ-
դիրը:

Այսպիսով, նախդիրների և ետադրութայունների գոր-
ծառութայունը վճռական արժեք է ստանում:

Գերազանցապես թեթևակա՞ն բնույթի խոնարհման մեջ
ևս նկատվում է վերլուծական համակարգին անցնելու
միտում, հանդես են գալիս խոնարհմանը նպաստող 0-
ժանդակ բայեր: Այսպես, Օրինակ՝ պատճառականի իմաս-
տը արտահայտելու համար հին պարսկերենը կորցրել է
իր նախկին —aya վերջածանցը:

Բներքսեսի կողմից վանում թողած արևանագրու-
թյան մեջ կան հետևյալ տողերը:

dipim naiy nipištam akunauš.

„նա գրել էտվեց արևանագրութայունը,“:

Այստեղ kunou բայը Օգտագործված է որպես 0-
ժանդակ բայ, ինչպես հայերենում՝ „տալ,“ բայը՝
գրել տալ հարադրութայան երկրորդ եզրում:

Հին պարսկերենի բայական նախածանցները այլևս
ինքնուրույն չեն, նրանք միշտ դրվում են բայից
առաջ և երբեք չեն անջատվում բայից:

Լեզվի զարգացման այս արագ ընթացքը պայմանա-

վորված է պարսից ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական որոշակի իրադարձութուններով, որոնց ճշգրիտ հաշվառումը միայն հնարավորութուն կտա լեզվի զարգացման ու նրա կրած փոփոխութունների մասին հանդեպ ճշգրիտ եզրակացութունների:

Պարսիկները, լինելով մեծ նվաճողներ, շատ հեռու էին գնացել իրենց սահմաններից, և նրանց լեզուն, որը նախապես ցեղային էր, հետագայում բարեհաջող պատմական պայմանների շնորհիվ՝ դարձավ մի հսկայական կայսրութայն լեզու: Ինչպես է, որ այս պայմաններում պարսկերենը շփվել է այլ քերականական համակարգեր ունեցող լեզուների հետ, կրել նրանց ազդեցությունը և իր զարգացման ընթացքում ձեռք բերել նոր, մինչև այդ չեղած Օրինաչափութուններ, ձևավորվել ու կատարելագործվել է դրանց համաձայն: Բերականական այդ նոր իրականությունների առկայությամբ էլ բացատրվում են պարսկերենի որակական փոփոխությունները պարսից ժողովրդի պատմութայն տարբեր շրջաններում:

Պարսից լեզվի կրած ձևափոխությունները և նրա ինքնուրույն զարգացումը հիմք լեզվից անկախ՝ չեն փոխել նրա հնդեվրոպական բնույթը: Այդ բոլոր փոփոխություններով ու նորամուծություններով հանդերձ, պարսկերենը ընդհանուր գծերով պահպանել է իր հնդեվրոպական հիմք լեզվի քերականութայն, հիմնական բառամբերքի և հնչյունային կազմի: հիմնական արտահայտություններն ու Օրինաչափութունները:

Հին պարսկերենի վերը նշած ձևաբանական նոր միտումները լայնորեն տարածվեցին և փոխեցին նրա բունույթը, սկիզբ դնելով պարսից լեզվի նոր, հաջորդ փուլին՝ միջին պարսկերենին, որը նախորդի համեմատությամբ՝ արդեն գերազանցապես վերլուծական տիպի էր:

Միջին շրջան: Սա ընդգրկում է մ.թ.ա. 4-րդ դարից մինչև մ.թ. 10-րդ դարը և ներկայացվում է միջին պարսկերեն անունով: Սա նույնպես տարածված էր իրանական բարձրավանդակի հարավ-արևմտյան մասում, ինչպես ցույց է տալիս ինքը անվանումը, միջին պարսկերենը ներկայացնում է պարսից լեզվի զարգացման միջին աստիճանը:

Միջին պարսկերենը տարածված է եղել Աքեմենյան ղինաստիայի անկման ժամանակից/ մ.թ.ա. 4-րդ դար/, մինչև նոր պարսկերենի կազմավորումը ընկնող ժամանակաշրջանը:

Եթե չհաշվենք մեզ ավանդված պարսկական դրամները՝ վրա հիշատակված առանձին անձնանուններն ու տիտղոսները, ապա մ.թ.ա. 3-րդ դարից մինչև մթ. 3-րդ դարի կեսը ընկած ժամանակաշրջանի պարսկերենի զարգացումը արտացոլող և ո՛չ մի նյութ մեզ չի ավանդվել:

Այսպիսով, չունենք մոտավորապես վեց դար ընդգրկող ժամանակաշրջանի լեզվի զարգացումը ցույց տրվող որևէ բնագիր: Եվ միայն Սասանյան ղինաստիայի հաստատումից հետո է, որ հանդես են գալիս քիչ թե շատ նշանակութուն ունեցող միջին պարսկերենի հուշարձաններ:

Միջին պարսկերենը Սասանյան ղինաստիայի պետական լեզուն էր: Այն ավանդված է մեզ զանազան արձանագրություններով ու գրքերով:

Սասանյան թագավորներ Արդեշիր Պապականը (224-241 թթ.), Շապուհ 1-ինը (241-272 թթ.) մի շարք արձանագրություններ են թողել Նաղշե Ռոստամում, Նաղշե Ռաջաբում, Հաջիաբադում: Ավանդված են նաև Ներսիի (293-302 թթ.) թողած արձանագրությունը՝ Փայթուհիում, Շապուհ 2-րդինը (309-379 թթ.), Շապուհ 3-րդինը (383-388 թթ.)՝ թաղե Բոսթանի ակադեմիայի վրա, որոնք, սակայն, փոքրածավալ են:

Արձանագրություններին հետևում է Սասանյան գրականութունը, որը պարունակում է թարգմանական, կրոնական, այլև աշխարհիկ թեմայով գրված նյութեր: Միջին պարսկերենի թարգմանական գրականության մեջ են մտնում հիմնականում Ալեստայի առանձին մասերի թարգմանությունները, ինչպես Վենդիդատի, Յասնայի, Նեյրանգեստանի, Վշտասպ Յաշտի, Վրսպերեդի և այլն թարգմանություններն ու մեկնաբանությունները:

Կրոնական գրականության մեջ կարևորագույն տեղ են բռնում Բունդհոշենը, Արտավիրաֆ Նամակը, Դինկարտը: Կրոնական գրականության մյուս հիշատակարաններն են՝ ,Ռեվայաթները, ,Ավանդութունները, ,

„Ձամասպ-նամակ, , , Անդարձի Աթուրպատի Սարսպանդան, , , „Անդնամակներ, , | „Իրատագրքեր, , | և այլն:

Մեզ ավանդված միջին պարսկական՝ աշխարհիկ բովանդակութեամբ գրականութեանը ծավալով ամենափոքրն է, սակայն իր պատմական արժեքով՝ խիստ նշանակալի: Այստեղ կարևորագույնն է „Քարնամակի Արտախշիթի Պապական, , պատմական վեպը՝ Արտաշիթ Պապականի մասին: „Թաղթարի Զարիրան, , | „Զարիրի հրշատակը, , | Մի այլ պատմական վեպ է, որը հայտնի է նաև „Գոշթասպյան շահնամ, , կամ „Փահլավի շահնամ, , անունով:

Մյուս աշխարհիկ երկերից են „Մատիթանի շաբրանգ, , կամ „Վաթրանգ - նամակ, , -ը „Մատվածք շախմատի մասին, , , „Շահրաստանի հայե էրանշահր, , | „Իրանի քաղաքները, , | „Պրախթե ասուրիք ու բուզ, , | „Արմավենին ու այծը, , | պոեմը:

Հիշատակութեան արժանի են նաև „Ֆարհանգի պահլավի, , և „Իվաթայնամակ, , | „Տերերի գիրքը, , | գործերը:

Միջին պարսկերենն ունի երկու գրութեան, որոնք հիմքում ընկած է արամեական այբուբենը: Մեկը գործ էր անվում արձանագրութեանների մեջ, մյուսը՝ գրքերի:

Միջին պարսկական գրքերի լեզուն խիստ անկախ է՝ խճողված սեմական, հատկապես արամեական բազմաթիվ բառերով: Այդ բառերը գրվում էին արամեական արտասանության համաձայն, բայց կարդացվում էին միջին պարսկերեն: Այսպիսի Օտարախան գրութեանը կոչվում էր հուզվարեշ:

Մեզ ավանդված միջին պարսկական գրականութեանը, իբրև մնացորդ երբեմնի ծաղկած գրականութեան, ամենշան չէ: Եվ զարմանալի է, թե այդ տարօրինակ այբուբենով, գրութեամբ ու բառակազմով՝ միջին պարսկերենը ինչպես է այդքան զարգացել ու առաջադիմել:

Գրական այդ հուշարձանները լեզվական հարուստ նյութ են պարունակում: Դրանց շնորհիվ մենք գաղափար ենք կազմում հիշյալ լեզվի բառապաշարի և նրա քերականական կառուցվածքի մասին:

Միջին պարսկերենը, ի տարբերութիւն իր հարուստ թեքականութեամբ հայտնի հին պարսկերենի, գերազանցապես վերլուծական տիպի լեզու է:

Այստեղ բացակայում են հոլովի, սեռի քերականական կարգերը: Բոլոր անվանական խոսքի մասերին բնորոշ է թեքական ձևերի բացակայութիւնը, իսկ բառերի շարահյուսական գործառութիւնները արտահայտվում են հիմնականում նախդիրների, ետադրութիւնների, իզաֆեթի ու շարադասութեան Օգնութեամբ:

Բերականական սեռի ջնջումը պարսկերենում տեղի ունեցավ մակեդոնական շրջանում, հետևաբար միջին պարսկերենը, ինչպես նաև նոր պարսկերենը քերականական սեռի տարբերակում չունի: Միջին պարսկերենում կա եզակի և հոգնակի թիվ: Երկակի թիվը, որ կար հին պարսկերենում, այստեղ արդեն չկա:

Հոլովաձևերի կորուստը և նախդիրների կիրառութիւնները վերաբերում են միջին պարսկերենի նախորդ շրջանին, որով և հին պարսկերենից միջին պարսկերենին անցնելու շրջանի հոլովական միջին ձևեր չկան: Գալով թեքմանը, այն միջին պարսկերենում բուն իմաստով վերաբերում է հոգնակի ձև և *ihō* վերջավորութիւններին, որոնք ավելանում են բառի հիմնական ձևի վրա:

Թեքականութեան բայբայման հետևանքով մեծ փոփոխութիւնների է ենթարկվել բայական համակարգը: Չգալի զարգացում են ապրել վերլուծական, նկարագրական բայական ձևերը: Այստեղ վերլուծական ձևերը սովորաբար բաղկացած են լինում երկու կամ ավելի բայաձևերից, որոնցից մեկը միշտ արտահայտված է Օժանդակ բայով: Նոր ապառնի ժամանակի վերլուծական ձևի կազմութեան, կրավորական սեռի, պատճառական բայաձևի նոր կազմութիւնները հանդես են գալիս որպես անցյալ ժամանակի նոր բայաձև՝ կազմված անցյալ դերբայից և այլն:

Նոր շրջանի Դարսից լեզվի պատմութեան մեջ այս շրջանը սկսվում է 9-րդ դարից և հարատևում

է առ այսօր:

7-րդ դարի առաջին կեսին Սասանյանների պետութիւնը՝ իրանը, ընկավ արաբական տիրապետութեան տակ:

Պարսից ժողովուրդը ենթարկվեց պատմական մեծ փորձութեան: Արաբների ձեռքին նվաճողական խոշոր գործիք էր կրօնը: Նվաճված իրանը հարկադրոված էր ընդունել իսլամը: Ի վերջո, Ջրաղաշտի հայրենիքում իսլամը հռչակվեց պետական կրօն:

Սակայն իրանի քաղաքակրթութիւնն ու անցյալի հոգևոր մշակույթը չուներ զոհվելու, իսկ նրա լեզուն պահպանվելով՝ իր ստորմաղորդութիւնն ցուցաբերեց ընդդեմ արաբների բռնի ուժացման:

Պարսիկներն ընդունելով իսլամը, խալիֆաթում ճանաչվում էին իրավահավասար անդամներ և սկսում մուսուլման գործել պետական մարմինները: Այսպիսով, իրանի նորաստեղծ պետութիւնը թեև համարվում էր արաբական, իրականում դեկլարվում էր պարսից քաղաքագետների, գորավարների ու մուսուլմանութեան կողմից: Հատկապես Աբբասյան խալիֆաթի Օրոֆ բարձրագույն և ամենապատասխանատու մեծ վեզիրի, պետական գործեր տնօրինողի պաշտոնները հանձնվեցին պարսից վեզիրական տոհմերին՝ Բարմակիդներին, Աֆշինին: Ընդհանրապես, Աբբասիդների պետութիւնը կիսապարսկական, կիսաարաբական մի պետութիւն էր, այն ընդօրինակել էր իրանի Սասանյանների պետութեան համակարգն ու նրա մշակույթը:

Իրանի ազգային լեզուն իսլամի ընդունումից հետո էլ շարունակում է մնալ առանց փոփոխութեան, և իրանի տարբեր շրջաններում ու գավառներում մինչև իսլամը տարածված բարբառները պահպանում են իրենց գոյութիւնը: Միակ բանը, որ բնականաբար անխուսափելի էր, որոշ բառերի մուսուլման էր պարսկերենից՝ արաբերենի և, փոխադարձաբար, արաբերենից՝ պարսկերենի մեջ, որ բխում էր երկրի կառավարման ընթացքի անհրաժեշտութիւնից: Հատկանշական է, որ արաբների նվաճման առաջին շրջանում արաբերենի փոխութիւնները պարսկերենից անհամեմատ ավելի շատ են, քան պարս-

կերենինը՝ արաբերենից: Եվ դա բնական էր. պարսիկները ավելի քաղաքակիրթ ժողովուրդ էին, ունեին պետական համակարգի ղեկավարման հարուստ ավանդույթներ ու բարձր մշակույթ և զրանց համապատասխան մշակված տերմինոլոգիա, որը և յուրացրին արաբները: Իսկ պարսիկների փոխառությունները արաբներից այդ շրջանում սահմանափակվում են իսլամի վարդապետության հետ կապված մի շարք բառերով:

Սակայն անհերքելի է, որ միջին պարսկերեն /պահլավերեն/ լեզուն ու նրա գրությունը մի քանի պատճառներով անկում էին ապրում: Նախ՝ այս լեզուն և գրությունը զգալիորեն ավելի խրթին էին, քան արաբերենն ու նրա գրությունը. իսկ միջին պարսկերենի /պահլավերենի/ բառապաշարն ու արտահայտչական միջոցները շատ ավելի սահմանափակ էին՝ համեմատած արաբերենի հետ: Այս պարսիկների առկայությունը խալիֆաթի ղեկավար կազմում միայն քաղաքական-վարչական բնույթի էր. նրանց շնորհիվ խալիֆաթի քաղաքական-տնտեսական և զարգաբարակտն բնագավառներն էր ներթափանցում իրանի, հատկապես Սասանյանների հարուստ մշակույթը: Արաբների նվաճման առաջին հարյուրամյակում արաբերեն են թարգմանվում իրանի գիտությունն ու գրականության հուշարձանները: Միջին պարսկական /պահլավական/ թարգմանական գրականության միջոցով արաբները հաղորդակից են դառնում հույն ու հնդիկ գրական, գիտական ու փիլիսոփայական հարուստ ժառանգությանը: Պարսից մշակույթը, միջին պարսկական /պահլավական/ գրականությունը դառնում են մի առատ աղբյուր արաբական նոր մշակույթի կերտման ասպարեզում, որով և բարձրանում է արաբների, նրա գրության հեղինակությունը, այլև սրանց յուրացման անհրաժեշտությունը:

Այս բոլորի հետ միաժամանակ կարևորվում էր և այն, որ արաբներնը պետական, պալատական լեզու էր, մի հանգամանք, որն ավելի էր նպաստում նրա տարածմանն ու զարգացմանը: Այսպիսով մի կողմից՝ գնալով ավելի էր զգացվում արաբների կարիքը, մյուս կողմից՝ այն հետզհետե ա-

վելի շատ էր բավարարում հոգևոր կարիքները: Ուստի, բնականաբար, յուրաքանչյուր պարսիկ, որն ունենում էր իրանում կամ իսլամական երկրներում, «ասպարեզ դուրս գալ», «անհրաժեշտաբար դիմում էր արաբներին: Բացառված է, որ արաբ իշխանները ևս ջանք էին ինչ-յում այդ լեզվի մասսայականացման ու տարածման համար: Սակայն անկախ դրանից՝ պարսիկներն իրենք, իրենց ստեղծագործութունները տարածելու նպատակով, շահագրգռված էին գրելու գիտական պաշտոնական լեզվով, որը հենց արաբներն էր:

Փաստերը վկայում են, որ որոշ գիտնականներ ստեղծագործել են արաբներն լեզվով, ապա սովյալ թաղաթի բնակչության կամ նրա իշխանի պնդմամբ թարգմանել են պարսկերեն, կամ էլ՝ հակառակը:

Նշված պայմաններում միջին պարսկերենը անխուսափելիորեն ընկավ ճգնաժամի մեջ, հասավ անկման եզրին:

Այնուամենայնիվ, այն հարստեց շնորհիվ ֆարսի գիտուն ու գործունյա մոզպետների ջանքերի և Բաղդադի ու այլ վայրերի գիտնականների հովանավորության ու պաշտպանության, ինչպես և շնորհիվ այն բանի, որ դեռ երկար ժամանակ արևմտյան իրանում, որի ժողովուրդը խոսում էր միջին պարսկերեն կամ նրան մոտ մի բարբառով, միջին պարսկերեն առանձին գրական երկեր ու առասպելներ դեռ շրջանառության մեջ էին: Պահլավերեն գիրն ու գրականությունը՝ այդ շրջանում սովորական էր, և երբեմն մուսուլման բանաստեղծներն ու գիտնականները դրանք թարգմանում էին արաբերեն կամ «դարի լեզվով»: Այդպիսին էր, Օրիակ՝ «Վիս ու Ուամիլը», որը, ինչպես երևում է նրա բովանդակությունից, եղել է նախաիսլամական շրջանի միջին պարսկական գրքերից: սրա բնագիրը մեզ էի հասել: Աբբասյանների ժամանակ պարսիկ մոզպետները ինչպես ֆարսում, այնպես էլ Բաղդադում՝

զբաղվում էին գրական, գիտական գործունեությամբ 9-րդ դարում, Մամուների ժամանակ, Աթուր ֆարսեադ ֆարոխզադան մոգպետը մի քանի հատորով հրատարակեց գրադաշտական վարդապետության դավանաբանութունների ժողովածու՝ Դինֆարտը, որը պարունակում էր նաև Ավեստայի մի մասի մեկնաբանութունները:

Դրանից առաջ և հետո, մինչև 13-րդ դարը Սասանյանների ժամանակներին վերաբերող մի շարք միջին պարսկական աշխարհիկ ու կրոնական գրքեր, ինչպես նաև Ավեստայի առանձին մասերի՝ Յաշտերի որոշ մեկնաբանութուններ հրատարակվում են զրադաշտական մոգպետների ու դաստուրների կողմից:

Դհարկե, շատ գրքեր մեզ չեն հասել, որոշ գրքեր էլ հայտնի են միայն շնորհիվ նրանց թարգմանութան, ինչպես, Օրինակ՝ «Վիս ու Մամինը», «Բահրամ Զուբինեամակը», «Նամեյե թանսորը», կան գրքեր, որոնց բնագրերը կորած են, սակայն ավանդված են արաբերեն թարգմանությամբ: Դրանցից են «Բելիլե ու Դեմե», «Հազար ու մեկ գիշեր», «Խոդայեամե», և այլն:

Այս բոլորից կարելի է հետևեցնել, որ պահլավական գիրն ու գրականութունը մինչև 12-13-րդ դարերը, այսինքն՝ մինչև մոնղոլների արշավանքը, իրանի տարբեր վայրերում դեռևս գտնվել է գործածության մեջ: Դրա լավագույն ակագույցը 13-րդ դարից մեզ ավանդված պահլավական ձեռագրերն են:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ մինչև 12-13-րդ դարերը զրադաշտականները իրանում դեռևս զբաղվում էին կրոնական, գիտական ու գրական գործունեությամբ:

Հայտնի է Ջարդոշտ Բահրամ Փաժդուի վկայութունը: Նա մոնղոլների արշավանքների ժամանակաշրջանում ալքել է իտրասանի շրջակայքում հայրը՝ Բահրամ Փաժդուն, նույնպես եղել է ժամանակի զրադաշտական գիտնականներից և պահլավերենին ու «դարի լեզվին», քաջ գիտակ, Հիշյալ վկայութան մեջ ասված է. «Հայրս Ջարդոշտնամակն ու Արտավիրաֆեամակը թարգմանեց դարի լեզվով, իսկ ես

այդ երկու գրքերը վերածեցի շափածոյի, :

Այդ նույն ժամանակ և դրանից հետո իր զարգացման բարձրագույն աստիճանին էր հասել ու համարած գործածութեան մեջ էր մտել «դարի լեզուն» :
Ինչպես հայտնի է, արաբական տիրապետութեանը համընկնում է զարգացող ֆեոդալիզմի դարաշրջանին, հատկապես 8-րդ դարից մինչև 11-րդ դարը : Այս շրջանում կենտրոնախույս ուժերը, հակառակ խալիֆայի ջանքերի, քայքայում էին նրան և հող ստեղծում նրա տրոհման ու մասնատման և անկախ ֆեոդալական իշխանութիւնների առաջացման ու ձևավորման համար :

Արաբական խալիֆայի ժայթաղակցից, որի հետևանքով առաջին հերթին անկախութեան ձգտումները իրականացան իրանական հողի վրա : Ապակենտրոնացման միտումները ուժեղ էին արտահայտվում իրանի մանավանդ արևելյան մարզերում : 9-րդ դարում մեկը մյուսի հետևից անկախացան էին իրանական մարզերը և հաջակում անկախութեան : Մեկը մյուսին հաջորդում են թահերիդների (821-873), Սաֆարիդների (867-903), Սամանիդների (875-999) և այլոց հարստութիւնները :

Բաղաբազան-տնտեսական և մշակութային բնագավառներում 10-րդ դարի իրանը բաց է անում իր պատմութեան ամենահարուստ էջերից մեկը :

Սամանիդների պետութեան սահմանները շահ իսմայիլի ժամանակ (892-907) տարածվում էին Բուխարայից մինչև Պարսից ծոցը, Հնդկաստանի սահմաններից մինչև Բաղդադի շրջակայքը :

Սակայն ֆեոդալիզմի զարգացման Օրինաչափութիւնները այնպիսիք էին, որ նույնիսկ իրանի պես մի երկիր, որ անցյալում ուներ կենտրոնացված միապետութիւն, այնուամենայնիւ, մնաց արտոհայտնի տարբեր մանր իշխանութիւնների և չկարողացավ վերականգնել միասնական անկախ մի պետութիւն : Սամանիդների պետութիւնը և սահմանափակվեց իր սկզբնական ճրանտօքսանիայում, խորասանում, իր գերիշխանութեան տակ ունենալով մի երկու մանր վասալական իշխանութիւններ : Բայց

և այնպես այդ սահմաններում էլ Սամանիդները կարողացան ստեղծել բարձր մշակույթ:

Այսպիսով, իալիֆաթի արևելյան մարզերում ըստեղծվում են պայմաններ, որոնք այդ շրջաններում տիրող կենդանի լեզվին հնարավորություն են ընձեռում դուրս գալու բաղաձայն ու մշակութային կյանքի ասպարեզ: Զատեղով հասնելու անկախության տեղական արիստոկրատիան բնականաբար դիմում էր իր ազգային հին մշակութային ավանդույթներին, ձգտում այդ ավանդույթները Օգտագործել որպես գաղափարական զենք՝ արաբական տիրապետության ու արաբական մշակույթի դեմ:

Այդ հողի վրա իրանի բնակչության որոշակի շրջաններում լայն զարգացում է գտնում այսպես կոչված Շոուբիյե գաղափարական շարժումը, որն իր առջև նպատակ է դնում, ի հակադրություն արաբական մշակույթի, վերականգնել, պրոպագանդել ու զարգացնել տեղական, սեփական մշակութային ավանդույթները:

Հասկանալի է, որ այս պայմաններում աճում է հետաքրքրությունը նաև տեղական բնակչության լեզվի նկատմամբ: Եթե արաբական տիրապետության առաջին շրջանում իրանի իշխող դասը ձգտում էր տիրապետել արաբերեն լեզվին, ապա Զ-րդ դարի երկրորդ կեսից արդեն դիտվում են հակառակ միտումներ:

Տեղի բնակչության լեզուն հաստատեղով որպես գրական ու պետական լեզու, տեղական հարստությունները և նրանց հարող շրջանները դրանով իսկ հաստատում էին իրենց քաղաքական ու մշակութային անկախությունը արաբական իալիֆաթից: Իալիֆաթի տիրապետությունից անկախ՝ առաջին փաստական ֆեոդալական պետությունների կազմավորումը, ինչպես արդեն նշեցիք, տեղի է ունենում խորասանի, Սիստանի, Մավերաննահրի տարածքներում, այսինքն՝ այն վայրերում, որտեղ հիմնական բնակչությունն արդեն խոսում էր պարսկերենով:

Զ-րդ դարի երկրորդ կեսից արդեն սկսվում է արաբերեն լեզվի դուրս մղվելը գրավոր գործածու-

թյունից: Սրա հիմնական պատճառը, իհարկե, այն էր, որ որպես գրական լեզու իշխող դասերի շատ նեղ՝ վերնախավային շերտերին սպասարկող արարե-րենք իրանի ժողովրդի լայն ղանգվածների համար միշտ մնում էր Օտար:

Իրանի բնակչութունը բոլոր ժամանակներում էլ իր բարբառներով էր խոսում: Երբ միջին պարսկերենը խոսակցական ու հասկանալի էր կենտրոնական իրանում, ֆարսում ու արևմտյան սահմաններում, այդ նույն ժամանակաշրջանում խորասանում ու Մավերանահրում տարածված ու գործածական էր դարին: Դարին մեկն էր արևելյան բարբառներից, որը խաչավորվելով տեղական բազմաթիվ բարբառների ու խոսվածքների հետ՝ դուրս եկավ հաղթանակով և բարենպաստ պայմանների շնորհիվ զարգանալով՝ բարձրացավ գրական լեզվի աստիճանի, սկիզբ դնելով պարսկերեն լեզվի զարգացման նոր փուլի, որ կոչվում է նոր պարսկերեն կամ ֆարսի դարի:

Նոր պարսկերենի լեզվական շրջան անվան տակ

պայմանականորեն հասկացվում է պարսից լեզվի պատմութայն այն փուլը, որով վկայված գրավոր աղբյուրները արաբատա են: Այսպիսով, այս շրջանի սկիզբը վերաբերում է 9-10-րդ դարերին: այն հարատևում է մինչև մեր Օրերը: Նոր պարսկերենի հնագույն հիշատակարանները Աբաս Մերվեցու մի քանի տող բանաստեղծութայուններն են, ապա Շահիդ Բահլեցու, Աբու Շարուբի, Հանզալե Բաղեղեյսիի, Վասիֆ Սիստանցու, Աբու Հաֆազ Սողդիի, Ռուզաֆիի, Ֆերդոուսու ստեղծագործութայունները: Այնհրածնշտ է նշել, որ նոր պարսկերեն գրական լեզվի մշակման գործում առաջնութայունն ու նախապատմութայունը պատկանում է խորասանի ու Մավերոնահրի բանաստեղծներին ու գրողներին: Հատկապես հետարաբական տիրապետութայն առաջին ամենանշանավոր գործիչներ Ռուդաֆին, Ֆերդոուսին, Լասեր խոսրովը, Օմար Խայամը դուրս են եկել խորասանից ու Մավերոնահրից:

Պատահական չէ նաև այն, որ Ղազնևի ու Սել-

Ջուկ սուլթանների պալատներում ստեղծագործող առավել նշանավոր բանաստեղծները Միստանից, Խորասանից ու Մավերոննահրից են, Օրիենակ՝ Բալհեցի Օնսորին, Միստանցի ֆարրոխին, Սարախսի Անվարին, Նիշապուրցի Մոեզզին և այլն:

Նոր պարսկերենը իրանի արևելյան շրջաններից ու Մավերոննահրից արագորեն տարածվում է նաև երկրի արևմտյան ու հյուսիսային շրջաններում: 11-րդ դարի սկզբին սկսում են այդ լեզվով գրել Մերվիկասպյան շրջանի Գուերգանի բանաստեղծները, 11-րդ դարի 40-ական թվականներին այդ լեզվով իր հիասքանչ բանաստեղծություններն է գրում Թավրիզցի Ղաթրանը: Այդ ժամանակ իսֆահանում այդ լեզվով իր գիտական ու փաստանրամատչելի հորինվածքներն է շարադրում Ալիթեման: Այդ ժամանակաշրջանին են վերաբերում պարսկերեն լեզվով հեղինակած առաջին պտմագրական աշխատությունները և այլն: 11-րդ դարի երկրորդ կեսին նոր պարսկերեն գրական լեզուն արդեն հսկայական հեղինակություն ու ազդեցություն է սեռում, որի շնորհիվ նրա գործածության շրջանակները տարածվում են նույնիսկ պարսկալեզու երկրների սահմաններից դուրս՝ Ատրպատական, Աֆղանստան, Հյուսիսային Հնդկաստան և այլն/:

Ինչպես նշվեց, նոր պարսկերենը Սամանիդների Օրոֆ հաստատվեց որպես պետական պաշտոնական լեզու: Այն ժամանակվանից, լեռնաձի քաղաքական իշխանության հաճախակի փոփոխության, պարսկերենը շարունակում է կատարել նույն դերը նաև Ղազնևիդների /10-11-րդ դդ./ միապետության, Սելջուկների /11-12-րդ դդ./, Խորեզմշահների /12-13-րդ դդ./ և ավելի մանր ֆեոդալական պետություններում: Նույնիսկ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում մոնղոլ խաները իրենց արտաքին հարաբերությունները վարում էին պարսկերեն լեզվով: Այդ լեզուն որպես պաշտոնական լեզու է մնում Թեյմուրիդների և ավելի ուշ՝ Բուխարայի ու այլ խանությունների, Սաֆավիների ու միջնադարյան այլ հարստությունների ժամանակ:

Նոր պարսկերեն գրական լեզուն միասնական էր պարսկալեզու բոլոր երկրներում, թեև տարբեր տարածքներում տարածված խոսակցական լեզուները աչքի էին ընկնում իրենց ինքնատիպությամբ ու բարբառային առանձնահատկություններով:

Այսպիսով, իրանի հարավարևմտյան բարբառի հիման վրա բարձրացած միջին պարսկական գրական լեզուն ճգնճամ պարելով՝ ի վերջո իր տեղը զիջեց արևելյան իրանի բարբառների հիման վրա գրական լեզվի աստիճանի բարձրացած նոր պարսկերենին՝ դարձին:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում պարսկերենը մեծ դիմացկունություն ցուցաբերեց ընդդեմ արաբերենի մեջ բունի ձուլման: Պարսից լեզվի քերականական կառուցվածքը պահպանվեց ամբողջությամբ, պահպանվեց նաև բառային կազմի հիմնական մասը: Այնուհանդերձ, պարսկերենը զգալի լատիով հարստացավ՝ ի հաշիվ արաբական բազմաթիվ բառերի փոխառության:

Նոր պարսկերենը կամ ուղղակի պարսկերենը, ի տարբերություն հին իրանական լեզուների, վերլուծական տիպի լեզու է:

Նոր պարսկերենում բացակայում են հոլովական կարգը, սեռի քերականական կարգը, անվանական խոսքի մասերի շարահյուսական հարաբերությունները արտահայտվում են վերլուծական տարբեր միջոցներով՝ նախդիրներով, ետադրություններով, շարադասությամբ, իզաֆեթային կառուցվածքով և այլն:

Թեթևանության քայքայման հետևանքով նոր պարսկերենում արդեն ջնջված են գոյականների ու ածականների ձևաբանական տարբերությունները: Մեծ փոփոխությունների է ենթարկվել բայական համակարգը, այստեղ զգալի զարգացում են ապրել վերլուծական, նկարագրական բայական ձևերը՝ կազմությամբ բարդ կատարյալի ձևեր՝ բաղադրված անցյալ՝ դերբայից, Օժանդակ բայերի Օգնությամբ, ապառնի ժամանակի ձևեր, կրավորական սեռի, կերպի ձևեր և այլն/:

Զորդ դարում արդեն դառնալով գրական լեզու՝ պարսկերենը իր գոյության մեկ հազարամյակի ընթացքում կրել է զգալի փոփոխություններ: Ընդ

որում, այդ փոփոխութիւնները հիմնականում վերաբերում են նրա բառային կազմին: այսպես՝ շատ բառեր, որոնք լայնորեն գործածվում էին դասական շրջանի գրականութան մեջ, դուրս են եկել շրջանառութունից, դրա փոխարեն՝ պարսից լեզվի բառապաշարի մեջ թափանցել, այն համալրել են թուրք-մոնղոլական, եվրոպական մեծ թվով բառեր:

Այլ եւլի նվազ չափով են փոփոխութիւնները քերականական կառուցվածքի մեջ 10րիւնակ՝ նախդրներին գործառութիւնների փոփոխութիւնը, 18 ստաղբութիւնների գիտարկութիւնների փոփոխութիւնը, էնկլիտիկ դերանունները, առանձին բայաձևեր և այլն/:

9-19-րդ դդ. պահանջել են մեծ քանակութեամբ գրական հուշարձաններ և պատմական աղբյուրներ:

20-րդ դարի սկզբից պարսից գրողների շրջանում նկատվում է գրական լեզուն խոսակցական լեզվին մոտեցնելու ձգտում:

իրանական հեղափոխութիւնների շրջանում 1906-1911 թթ. / անկախութեան և սահմանադրութեան համար մղվող պայքարի հետ միաժամանակ՝ տեղի էր ունենում լեզվի դեմոկրատացման լայն պայքար:

Պարսից լեզուն ազատվում է արաբական բարդ ու խրթին դարձվածքներից ու ոճերից, այսպես կոչված բարձր ու փքուն՝ վերամբարձ ոճից: Լեզվի մեջ թափանցում է ժողովրդական խոսակցական տարրերի կենդանի հոսք: Մի շարք գրողներ իրենց հերոսների երկախոսութիւններում աշխատում են արտացոլել խոսակցական լեզվի առանձնահատկութիւններն ու տեղական խոսվածքները /Ձամալզադե, Հեղայաթ և ուրիշներ/:

Այնուհանդերձ, մինչև այժմ էլ դեռ շարունակվում է պահանջել՝ գրավոր և բանավոր լեզուների տարբերութիւնները: բարձր ոճում դեռևս գործածվում են բառային և քերականական հնաբանութիւններ:

Ժամանակակից իրանին բնորոշ են մեծ թվով լեզուների բարբառներն ու տեղական խոսվածքները: Դրանք զգալիորեն տարբերվում են պարսկերեն գրական

Լեզվից: Իրանի ողջ տարածքի վրա մեծ տարածում է գտել թեհրանի խոսակցական լեզուն (թեհրանի բարբառը):

Իրանի տարբեր շրջաններում թեհրանի բարբառի մեջ մուտք են գործում զանազան այլ բարբառների տարրեր, իսկ որոշ երևույթներ էլ հատուկ են միայն թեհրանին և այլ շրջաններում չեն հանդիպում:

Թեհրանի բարբառը գրական նոր լեզվի մեջ մտնող ման ամենուհիմնական աղբյուրներից մեկն է: Այդ մասին են վկայում իրանի խոշորագույն գրողների և հրապարակախոսների ստեղծագործությունները:

ԳՆՈՒԻ ԱՌԱՋԻՆ
ՀՆՁՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտասանական գործարաններ

Արտասանական ապարատը բաժանվում է մի քանի գործարանների, որոնցից յուրաքանչյուրը հնչյունաբանության համար ունի առավել կամ նվազ նշանակություն: Այդ գործարանները սկսվում են թոփերից և վերջանում բերանի ու քթի խողովներով:

Թոփերը զետեղված են կրծքի խողովում, որ նույնպես որոշ դեր է խաղում հնչյունների արտասանության գործում, քանի որ մատակարարում է անհրաժեշտ նյութ՝ Օդի հոսանք և, այդպիսով, շրտորհիվ միջկողային և ստոծանու մկանների՝ հանդիսանում է Օդի արտաշնչող /էքսպիրատոր/:

Բառերի վանկային կազմությունը և շեշտը արդյունք են կրծքի խողովի գործունեության:

Թոփերը, որ արտաշնչող Օդի պարկ են՝ զետեղված կրծքի խողովում և հենված ստոծանու վրա, բրոնխային ծյուղների միջոցով միանում են շնչափողի հետ: Վերջինս մի խողովակ է, որ կազմված է կոճիկային Օղակներից և գտնվում է որկորի առաջին մասում: Դա թոփերից դուրս եկող և այնտեղ ներշնչվող Օդի ճանապարհն է:

Շնչափողը վերին ծայրը կազմում է կոկորդո /larynx /, որը ևս արտասանության գործում խաղում է կարևոր դեր: Դա կազմված է մի քանի շարժուն կոճիկներից, որոնք մկանների և մաղասամաշկի միջոցով միանալով իրար, ձևացնում են խողովակի շարունակությունը: Այդ կոճիկներից առաջինն է մատանեձև կոճիկը՝ սա իր նեղ կողմով

դարձել է դեպի առաջ, իսկ հաստ մասով լոր համա-
պատասխանում է մատանու ահրն/՝ դեպի ծոծրակը:
Դրանց վրա առջևի կողմից բարձրանում է վահա-
նակ կռճիկը, որը կազմելով անկյուն լոր հայտ-
նի է աղամարննոր անունով/, ետևի կողմում միա-
նում է մատանեակ կռճիկի հաստ մասի հետ: Վերջի-
նիս վրա բարձրանում են երկու բրզան կամ շերե-
փան ճկուն ու շարժուն կռճիկներ:

Այս բրզան կռճիկներից սկսվում են ձայնալա-
րերը (chordae vocales), որոնք առջևի կողմում
միանում են վահանակ կռճիկի մեացրած անկյան գա-
գաթում: Այսպիսով, ստացվում է ձայնանցքը, որով
անցնում է Օդի հոսանքը: Այս անցքը բաժանվում է
երկու մասի, որոնցից մեկը գտնվում է երկու բր-
զան կռճիկների մեջտեղը, իսկ մյուսը կազմում է
նրա շարունակութունը՝ մինչև վահանակ կռճիկը:

Շնորհիվ բրզան կռճիկների շարժան և ձայնա-
լարերի ձգվելու ու թուլանալու, ձայնանցքի եր-
կու մասերն առանձին-առանձին, այլև միասին կա-
րող են առաջացնել Օդի հոսանքի համար անհրաժեշտ
անցքի զանազան մեք և մեծութուններ:

Բոլոր ձայնավոր և ձայնորդ հնչյունները հե-
տևանք են ձայնալարերի թրթռալու: Առոգանությու-
նը՝ հնչերանգը և շեշտը նույնպես կախում ունեն
ձայնալարերի գործունեութունից: Վերջապես, ձայ-
նալարերի որոշակի գործունեութունն առաջացնում
է որոշ կոկորդային աղմկային հնչյուններ:

Կոկորդի շարունակությունը՝ մինչև բերանի խո-
ռոչի սահմանները կազմում է սոսորդը (pharynx),
որ արտասանության տեսակետից առանձին կարևորու-
թյուն չի ներկայացնում:

Սոսորդի, քթի խոռոչի և բերանի խոռոչների սահ-
մանում գտնվում է փափուկ քիմքը (palatum molle),
որ կազմում է կոշտ քիմքի (palatum durum),
շարունակությունը և խոռոչների նկատմամբ կատա-
րում է դռնակի դեր:

Փափուկ քիմքի ճայրը, որ գնդի մե ունի, կոչ-

վում է լեզվակ / ս յ ս | a | : լեզվակի գործուն
մասնակցութեամբ արտաբերվող հնչյունները կոչվում
են ուվուլյար :

Շնչեղուց փափուկ քիմքը կախած ղրություն է
ուեննում, և Օղի հոսանքը թթի խոռոչով ազատ անց-
նում է դեպի ղուրս, ապա ղրսից՝ դեպի թոփերը :
Արտասանութեան ժամանակ փափուկ քիմքը սովորաբար
բարձրանում է և փակում թթի խոռոչը, բացառութեամբ
ռնգային հնչյունների արտասանութեանից : Այս դեպ-
քում փափուկ քիմքը նույն ղիրթն է ընդունում, ինչ
որ շնչեղու միջոցին :

Քթի խոռոչը կազմված է երկու թթամասերից
(choanae), որոնք իրարից բաժանվում են մի ուղղա-
հայաց միջնորմով :

Քթի խոռոչը ձայների վերաբերմամբ խաղում է
միայն արձագանքողի (ռեզոնատորի) դեր և անկարող
է փոխել իր ձևը կամ առաջացնել տեղական աղմուկ :
Արա մասնակցութեանն առաջ է բերում հնչյուննե-
րի՝ ռնգային գունդավորում, որ այլապես կոչվում է
ռնգայնացում (նազալիզացիա) :

Բերանի խոռոչն ամփոփվում է երկու՝ վերին և
ստորին ծնոտների մեջտեղում : Սա հնչյունների ար-
տասանութեան գլխավոր հնոցն է և արտաբերութեան
համար ունի նույն նշանակութեությունը, ինչ երգի ժա-
մանակ՝ կոկորդը : Այս հանգամանքը բացատրվում է
հետևյալով : 1/ բերանի խոռոչում են առաջանում
այն բոլոր աղմուկները, որոնք ձայնին տալիս են
այս կամ այն հնչյունի կերպարանքը, որով և առաջ
են բերում բաղաձայն հնչյունների համարյա ամբողջ
կազմը : 2/ բերանի խոռոչը կատարում է դերը արձա-
գանքողի, որի ձևը ենթակա է փոփոխության, նայած
թե՛ ինչ դիրքերնդունեն բերանի խոռոչի շարժուն
գործարանները՝ շրթունքները, լեզվի առջևի, միջին
և ետին մասերը : Բերանի խոռոչում առաջացած տար-
բեր արձագանքների անմիջական հետևանք են բոլոր
ձայնավորները : Այսպիսով՝ մինչդեռ թթի խոռոչը,
որպես արձագանքող, խաղում է ոչ այնքան գործուն
դեր, բերանի խոռոչի դերը միանգամայն գործուն է՝
շնորհիվ հիշյալ շարժուն գործարանների :

Բերանի խոռոչի սահմաններում են գտնվում հետևյալ գործարանները, որոնք, ըստ գործառութայն, բաժանվում են երկու խմբի՝ ակտիվ և պասիվ:

Ա. Ակտիվ կամ շարժուն գործարանները հետևյալներն են.

1/ Փափուկ փոխքը լեզվակով:

2/ Լեզուն. սա այն նշանավոր գործարանն է, որի անունը, շնորհիվ նրա կատարած խոշոր դերի, հատկացվել է հոգեբանական, բնախոնական և Կրթիկական երևույթները մի ամբողջ շարքի, որ կազմում է մարդկային լեզուն: Պետք է տարբերել լեզվի հետևյալ մասերը՝ կողքեր, ծայր, հիմք, բայց արտասանության համար ամենակարևորը վերևի փափուկ մասը կամ մեջքն է, որ արտասանության ժամանակ զանազան շարժումներով և ձևերով հպվում է բերանի առաստաղին՝ փոփոխ, կամ շոշափում այն: Այդ շարժումները, սակայն, պայմանավորվում են լեզվի հիմքի այլ մասերի փոփոխություններով:

Կարևոր է հիշել լեզվի մեջքի երեք մասերը՝ առջևի, միջին և ետին:

3/ Նրթունքները /գլխավորապես ստորին/:

Բ. Պասիվ կամ անշարժ գործարանները հետևյալներն են: Կոշտ փոփ, Լնդեր, ատամներ և մասամբ՝ վերին շրթունքը: Մինչդեռ լեզուն և ստորին շրթունքը մուրճի դեր են կատարում, անշարժ գործարանները ներկայանում են որպես զնդան և ենթակա են նրանց հարվածներին:

Այսինքն գործարանների շարժումների ժամանակ բերանի խոռոչում առաջանում են մի շարք խոլերնդոտներ, որոնք արգելակում են Օդի ազատ հոսանքը: Այդ խոլերնդոտները լինում են երկու տեսակի.

1/ հպում, երբ լեզուն կամ ստորին շրթունքը միանում կամ հպվում են համապատասխան պասիվ գործարաններին. 2/ ճեղք, որ առաջ է գալիս երկու կարգի /շարժուն և անշարժ/ գործարանների՝ կիսով չափ միանալու դեպքում: Արտասանելիս՝ հրկման դեպքում ստացվում են պայթյուն և պայթական

հնչյուններ, որոնք լինում են պարզ և բաղադր-
յալ: Մինչդեռ ճեղքն առաջ է բերում շփման աղ-
մուկ և այսպես կուլած շփական /ֆրիկատիվ/ հըն-
չյուններ /սպիրանտներ/:

Անհրաժեշտ է տարբերել հնչյունները տառերից,
հնչույթները /ֆոնեմաները/ գրույթներից /գրաֆե-
մաներից/: Եկատր ունենալով ուսումնասիրվող ա-
ռարկայի դիտողական կարևորությունը, պետք է պայ-
մանավորվել հնչույթները ներկայացնել գրույթնե-
րի մեով, գիտակցելով, իհարկե, համապատասխան զու-
գորդման ներկայությունը, այսինքն՝ յուրաքանչ-
յուր հնչույթին հատկացնելով համապատասխան գը-
րույթը և հակառակը: Այս նպատակով ամենահարմար
միջոցն է գործածել լատինական այբուբենի տառեր՝
որոշ լրացումներով: Լատինական տառադարձություն
գործածելը ունի երկու առավելություն՝ 1/ կխու-
սափենք գիտական նպատակով գործածվող նշանները
սովորական տառերի հետ շփոթելուց ու ազատ կլի-
նենք սխալ արտասանության վտանգից և 2/ կծանո-
թանանք այն միջոցներին, որոնք գործադրվում են
լեզվաբանության մեջ և արդեն մեծ չափով կիրառ-
ված են պարսից լեզվին վերաբերող ուսումնասիրու-
թյուններում:

Պիմելով այս տառադարձությանը, մենք պետք է
անհրաժեշտաբար յուրաքանչյուր գրույթի հետ զու-
գորդենք համապատասխան արտասանական և լսողական
պատկերներ, քանի որ ոչ լեզվի արտասանական և ոչ
էլ լսողական տարրերը չեն գտնում: Իրենց արտա-
հայտությունը տվյալ գրույթների մեջ: Այսպես,
Օրինակ՝ է հնչյունն արտասանական կողմը կազ-
մում են հետևյալ բնախուսական երևույթները և նը-
րանց պատկերացումները: 1/ աշխատանքի կենտրո-
նացում բերանի առջևի մասում: 2/ լեզվի առջևի
մասի հպում աստամների արմատներին: 3/ քթի խո-
ռոչի փակում փափուկ քիմքի միջոցով: 4/ ձայնա-
լարերի թրթիռի բացակայություն: Նույն հնչյու-
նը ունի հետևյալ լսողական տպավորությունները
և համապատասխան մտապատկերները: 1/ լսողական
/ակուստիկական/ պայթյուն: 2/ մաքուր հնչյուն
առանց ռեզային գույնավորման, 3/ խուլ /և ոչ թե
հնչյուն/ ձայն:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆԵՑ ԱՐՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնավորների տարբերութիւնը բաղաձայններից կարող է լինել արտասանական և լսողական:

Արտասանական տարբերութիւնն այն է, որ մինչդեռ բաղաձայնները հետևանք են բերանի խոռոչի յուրահատուկ աղմուկների, բերանի խոռոչը ձայնավորների վերաբերմամբ կատարում է միայն արձագանքողի դեր, փոփոխելով իր դիրքը շնորհիվ շարժուն գործարանների և, այսպիսով, առաջացնելով այս կամ այն ձայնավորին հատուկ տեմբրը:

Ձայնավորների լսողական տարբերութիւնը բաղաձայններից կախված է նրանից, թե ինչպիսի տպավորութիւն է ստացվում ձայնավորները և բաղաձայնները լսելիս՝ միայն աղմուկ [աղմկային հնչյուններ], թե՞ երաժշտական ձայն [ձայնավորներ և ձայնորդներ]։

Ասկայն ձայնավորների տարբերութիւնը բաղաձայններից բացարձակ է, այլ՝ հարաբերական անցումներով: Միջնորդական նշանակութիւն ունեն ւ, ո, ո₂ և հնչյունները, որոնք իրենց որոշ հատկութիւններով նույնանուն են ձայնավորների հետ/բերանի խոռոչի արձագանք, Օդի ազատ հոսք/ իրենց մյուս հատկութիւններով դրանք պատկանում են բաղաձայնների թվին [սովորաբար վանկակազմիչ չեն, արտասանութեան ժամանակ ստացվում է նույնպիսի հրպուս կամ ճեղք, ինչպես աղմկայինների դեպքում]։

Այս է պատճառը, որ մի կողմից՝ ձայնորդ ւ, ո, ո₂, ո հնչյունները, ինչպես ձայնավորները, հակադրվում են աղմկայիններին, մյուս կողմից՝ ուսուսումնասիրվում են որպես բաղաձայն հնչյուններ՝ աղմկայինների հետ միասին:

Նկատի ունենալով, որ բոլոր բերանային հնչյունների արտասանութիւնը հետևանք է շարժուն գործարանների որոշ աշխատանքի, որի ժամանակ անշարժ գործարանները կատարում են միայն պասիվ, դեր, այդ հնչյունները, ուրեմն և ձայնավորները, կարելի է բաժանել երկու տեսակետով՝ ըստ ակտիվ և ըստ պասիվ գործարանների: Ակտիվ գործարաններից գլխավորն է լեզուն: Ձայնավորների արտասանութեան

Ժամանակ լեզուն քիմքի նկատմամբ կարող է ընդունել հորիզոնական կամ ուղղահայաց դիրք, ձևացնելով երեք հորիզոնական և երեք ուղղահայաց դրոթյուններ։

Ըստ լեզվի հորիզոնական ուղղութայան՝ ձայնավորները լինում են առաջնալեզվային, միջնալեզվային և ետնալեզվային։ Սրանք կոչվում են ետին, միջին և առաջին կարգի ձայնավորներ։

Քիմքի նկատմամբ ընդունելով ուղղահայաց դիրք՝ լեզուն ձևացնում է ստորին, միջին և բարձր դրոթյուններ։ այս երեք դիրքերն էլ պարզ որոշվում են բերանի խոռոչի բացվածքի չափով։ Ըստ այդմ՝ ձայնավորները լինում են ստորին բարձրացման, միջին բարձրացման և վերին բարձրացման։ Այս ստորաբաժանման ձայնավորներից յուրաքանչյուրը կարող է լինել բաց և փակ, կամ լայն և նեղ ըստ անգլիական հնչույթաբանների։

Այսպիսով, մենք ծանոթացանք երեք կարգի ձայնավորներին՝ /ետին, միջին, առաջին/։ այդ կարգերից յուրաքանչյուրը պարունակում է վերին, միջին և ստորին բարձրացման ձայնավորներ, իսկ սրանցից յուրաքանչյուրը, ասվեց, կարող է լինել փակ և բաց։

Սակայն ձայնավորների վերջնական դասակարգման համար կարևոր է ծանոթանալ և շրթունքների դերին։ Վերջինս կայանում է նրանում, որ յուրաքանչյուր կարգի ձայնավորների արտասանության ժամանակ շրթունքները երբեմն դեպի առաջ են ուղղվում, ձևացնելով շրջանաձև անցք, որ կարող է լինել լայն և նեղ։ Այդ դեպքում փոխվում է բերանի խոռոչի ձևը, ըստ այդմ՝ նաև ձայնավորի տեմբրը, ուրեմն և բրնույթը։ Այդ բրնույթը կոչվում է շրթնայնացում /լաբիալիզացիա/։ երեք կարգից յուրաքանչյուրը կարող է լինել շրթնայնացումից ազատ կամ շրթնայնացած։ Երեք շրթնայնացած կարգերից յուրաքանչյուրը նույնպես կարող է ունենալ վերին, միջին և ստորին ձայնավորներ, իսկ և բաց տոնավորումներ։

Այժմ ցույց տանք գրական պարսկերենի ձայնավորները՝ համապատասխան բաժանումներով։

Պարսկերենն ունի 6 միաբարբառ՝ պարզ ձայնավոր
/մոնոֆտոնգ/ և 2 երկբարբառ /դիֆտոնգ/ հնչյուն-
ներ:

Պարսկերենի միաբարբառներն են ä, e, o, a, u, i
/ä, ɛ, ɔ, a, u, i/, որոնք կարող են ներկայացվել հե-
տևյալ հնչյունական-դիտողական գծապատկերով:

| | | | |
|---|------|---|-----|
| u | /ու/ | i | /ի/ |
| o | /օ/ | e | /է/ |
| a | /ա/ | ä | /ä/ |

Այստեղ տարբերվում են երկու կարգի ձայնավոր-
ներ՝ առաջնալեզվային կամ առաջնային կարգի և ետ-
նալեզվային կամ ետին կարգի ձայնավորներ:

Միջնալեզվայիններ կամ միջին կարգի ձայնավոր-
ներ չկան: Առաջնալեզվային ձայնավորներն են՝ i, e, ä
/ի, է, ä/, ետնալեզվային ձայնավորներն են՝ u, o, a
/ու, օ, ա/:

Վերին բարձրացման ձայնավորները շատ փակ չեն, սը-
րանց արտաբերման ժամանակ լեզուն գտնվում է հնարավոր
ամենաբարձր դրուժյունից քիչ ցած, իսկ միջին բարձ-
րացման ձայնավորները բավական փակ են: ըստ լեզվի
դիրքի՝ նրանք ավելի մոտ են վերին բարձրացման,
քան ստորին բարձրացման ձայնավորներին:

Ստորին բարձրացման ձայնավորները այնքան էլ
բաց չեն: սրանց արտաբերման ժամանակ լեզուն ամե-
նաստորին դիրքից զգալիորեն բարձրանում է:

Բոլոր ետնալեզվային ձայնավորները շրթայնա-
ցած են, իսկ բոլոր առաջնալեզվայինները շրթայնա-
ցած չեն: Բացի նշված որակական հատկանիշներից,
պարսկերենի ձայնավորներին բնորոշ է նաև ամանա-
կական/քանակական/ հատկանիշը: ըստ նշված հատ-
կանիշի՝ ձայնավորները լինում են երկար և կարճ:

երկար ձայնավորներն են՝ i, u, a /ի, ու, ա/

